



Համաշխարհային ապրանքային շուկաների զարգացումները և ՀՀ
սպառողական գների ինդեքսը

2018թ Չորրորդ եռամսյակ

Համաշխարհային ապրանքային շուկաների վերլուծության նպատակը դրանցում շրջանառվող հիմնական ակտիվների գծով առանցքային զարգացումների դիտարկումն է՝ գների միտումների վերլուծությունը և այդ միտումները պայմանավորող հիմնական գործոնների բացահայտումը, ինչպես նաև ՀՀ ապրանքային շուկայի և սպառողական գների վրա դրանց ազդեցության ուսումնասիրությունը: Համաշխարհային շուկաներում գնանշվող ապրանքատեսակներից ուսումնասիրվում են Էներգակիրները (նավթ, բենզին, դիզելային վառելիք), մետաղներից պղինձը, պարենային ապրանքներից նրանք, որոնք էական ազդեցություն ունեն ՀՀ տնտեսական զարգացումների, մասնավորապես՝ տնտեսական ակտիվության և սպառողական գների վրա: Հաշվի առնելով այդ ազդեցությունների լագային բնույթը, միջազգային շուկաների զարգացումները դիտարկվում են ամենաքիչը 2, իսկ հայաստանյան սպառողական գները՝ 1 տարվա կտրվածքով:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից համաշխարհային ապրանքային շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են համաշխարհային ապրանքային բորսաներում (Chicago Mercantile Exchange, Intercontinental Exchange (ICE), London Metal Exchange և այլն) գնանշումների՝ Investing.com և Thompson Reuters գործակալությունների կողմից հրապարակումները և տեղեկատվական-վերլուծական նյութերը, ՀՀ ԿԲ և ԱՎԾ կողմից ներկայացվող վիճակագրությունը, ՀԲ կողմից հրապարակվող վիճակագրությունը:

Ամփոփագիրը կազմված է 5 մասից, որոնցից առաջին 3-ում նախ ամփոփ ներկայացվում են ապրանքային շուկաների առանցքային զարգացումների ու դրանց դրսևորած ազդեցությունների ուղղությունները, ապա առանձին ներգիրում ներկայացվում են այդ շուկաներին բնորոշ զարգացումները և ապա ավելի դետալացված քննարկվում ազդեցությունների բնույթն ու չափը: 4-րդում ներկայացվում է ՀԲ կողմից հրապարակվող միջազգային ապրանքային շուկաների ինդեքսի ու դրա բաղադրիչների, իսկ 5-րդ մասում՝ ՀՀ սպառողական գների ինդեքսը և դրա դինամիկան:

Սույն ամփոփագրում հրապարակված վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏԸ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են, և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:

«Ամբերդ» հետազոտական կենտրոն

Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք
Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

Բովանդակություն

Ամփոփ տեսություն	4
1. Էներգակիրների շուկա, փոխարժեք և սպառողական գներ.....	5
2. Մետաղների շուկա	10
3. Պարենային շուկա և սպառողական գներ	13
4. Միջազգային ապրանքային ինդեքսներ	19
5. Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում	22

Ամփոփ տեսություն

- ✓ 2016-2018թթ արդյունքներով նավթի գները վերականգնվել են 2014-2015թթ անկումից, ինչը ՀՀ տնտեսության վրա հակասական ազդեցություններ է ունեցել՝ պայմանավորված Ռուսաստանի տնտեսական զարգացումների տեսանկյունից դրական և Հայաստանում վառելիքային ապրանքների գների տեսանկյունից բացասական էֆեկտներով:
 - 2018թ-ի երկրորդ և երրորդ եռամսյակների ընթացքում նավթի գնի աճի դրական ազդեցությունները, որոնք նախկինում փոխանցվել են Ռուսաստանի տնտեսության և ռուբլու փոխարժեքի միջոցով, գրեթե չեն դրսևորվել՝ պայմանավորված Ռուսաստանի նկատմամբ սանկցիաներով և այլ գործոններով:
 - 2018թ-ի առաջին 3 եռամսյակներում նավթի գնի աճի ազդեցությունները ներքին շուկայում վառելիքային ապրանքների գնաճ չեն առաջացրել, սակայն վերջին եռամսյակում տեղի ունեցած անկումը դեկտեմբերին հանգեցրել է բենզինի և դիզվառելիքի գների որոշակի նվազմանը:
- ✓ 2016-2017թթ պղնձի բորսայական գները զգալիորեն աճել են, ինչից ՀՀ տնտեսությունը էականորեն օգտվել է՝ շնորհիվ Հայաստանից պղնձի խտանյութի արտահանման գնի ավելացման:
- ✓ 2018թ-ի ընթացքում պղնձի գինը միջազգային շուկայում զգալի կոռեկցիայի է ենթարկվել, որին համապատասխան նվազել է պղնձի խտանյութի արտահանման գինը Հայաստանից:
- ✓ 2016-2018թթ ընդգրկող ժամանակաշրջանում պարենային ապրանքների մեծ մասի բորսայական գների փոփոխության նկատմամբ հայաստանյան սպառողական գները անտարբեր են եղել:
- ✓ 2016թ-ի սեպտեմբերից սկսված և շաքարավազի բորսայական գների նվազման միտումը սկզբում ժամանակային խզմամբ և փոքր չափով, իսկ 2018թ-ի երկրորդ կեսին արդեն էականորեն նպաստել է հայաստանյան շուկայում շաքարի գների նվազմանը:
- ✓ Համաշխարհային բանկի կողմից ցածր և միջին եկամտով երկրների համար պարբերաբար հաշվարկվող ապրանքային գների ինդեքսները 2018թ չորրորդ եռամսյակի ընթացքում նախորդ տարվա համեմատ նվազել են ինչպես էներգետիկ ապրանքների այնպես էլ ոչ էներգետիկ ապրանքների դեպքում:
- ✓ Դիտարկված ապրանքային խմբերի միջազգային և հայաստանյան շուկաներում փոփոխությունների ամենամեծ կապը արձանագրվել է բենզինի և դիզելային վառելիքի դեպքում՝ համապատասխանաբար 0,86 և 0,67: Խոզի և տավարի մսի դեպքում բացասական կորելացիոն կապ է դիտարկվել: Շաքարի դեպքում կորելացիայի գործակիցը 0,71 է կազմել:
- ✓ Ալյուրի և այլ հացահատիկի դեպքում -0,83 բացասական կորելացիոն կապ է դրսևորվել համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող հացահատիկային ապրանքների ինդեքսի հետ:

1. Էներգակիրների շուկա, փոխարժեք և սպառողական գներ


2016-2018թ սեպտեմբեր ժամանակահատվածում նավթի գները զգալիորեն վերականգվել են (ավելի քան կրկնապատկվել), սակայն սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին կրկին նվազել: Այս պրոցեսները ՀՀ տնտեսության վրա ունեցել են ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այսպես, նավթի գների աճը մինչև 2018թ-ի սկիզբ նպաստել է ռուսական ազգային արժույթի՝ դոլարի և դրամի նկատմամբ դիրքերի ամրապնդմանը, ինչը դրական է ազդել ՌԴ-ից ստացվող տրանսֆերտների գնողունակության վրա, ինչպես նաև բարելավել առևտրի պայմանները: Մյուս կողմից սակայն՝ նավթի գների աճը հանգեցրել է բենզինի և դիզվառելիքի բորսայական գների աճին, որին կտրուկ արձագանքել են նաև հայաստանյան սպառողական գները: Ուշագրավ է, որ բենզինի և դիզվառելիքի գները զգայուն են եղել և արձագանքել են 2018թ-ի 4-րդ եռամսյակում տեղի ունեցած նավթի գնի նվազմանը:

Միջազգային անդրադարձ 1

Էներգակիրների միջազգային գները 2016-2018թ.

Նավթի գները դիտարկվող ժամանակահատվածում՝ 2016թ-ի հունվարից սկսած, դրսևորվել են վերականգնման ընդհանուր միտում: Brent տեսակի նավթի գներն մինչև սեպտեմբեր ընթացքում աճել են ավելի քան կրկնակի՝ 2018թ-ի սեպտեմբերի վերջին գերազանցելով 1 բարելի դիմաց 80\$-ի սահմանագիծը: *Սակայն սեպտեմբերից մինչև դեկտեմբեր նավթի գները նվազել են մոտ 30\$-ով՝ կորցնելով փարվա ընթացքում արձանագրած աճը և հայտնվելով նախորդ փարվա դեկտեմբերի ցուցանիշից ցածր մակարդում: Այնուամենայնիվ, նավթի գները պահպանվում են 2016թ-ի սկզբից ձևավորված աճի տրենդում:*


Brent տեսակի նավթի գնանշումները, 1 բարելի դիմաց ԱՄՆ դոլար



Աղբյուր՝ Investing.com


Նավթի գների վերջին 3 տարիների վերականգնումը 2014-2015թթ անկումից հետո տեղի է ունեցել հիմնականում ՕՊԵԿ-ի կողմից առաջարկի նվազեցման և սառեցման ռազմավարության շնորհիվ, որը, որոշ շեղումներով, **հասել էր նպատակադրված արդյունքին**: Կարտելը, Ռուսաստանը և Իրաքը համատեղ համաձայնության էին եկել նավթի օրական առաջարկը կրճատել 1.2 մլն բարելով, և թիրախավորել էին **60\$ 1 բարելի դիմաց գինը**, սակայն ԱՄՆ կողմից թերթաքարային նավթի արդյունահանման ծավալների դանդաղ վերականգնումը, համաշխարհային տնտեսության և նավթի նկատմամբ պահանջարկի արագ վերականգնումը և դրական սպասումները գները 2018թ-ի սկզբից վեր հրեցին նաև 70\$-ի սահմանագծից: 2018թ-ի երկրորդ և երրորդ եռամսյակներում նավթի գների աճը շարունակվեց՝ պայմանավորված աշխարհաքաղաքական իրավիճակով և առաջարկի ընդլայնման ավելի թույլ տեմպերով քան սպասվում էր: Նավթի գների աճի համար էական դրական ազդակ էր նաև **Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի սանկցիաները**, որոնք ուժի մեջ ամբողջությամբ մտան նոյեմբեր ամսին: 2018թ-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին նավթի գները կտրուկ անկում ապրեցին՝ նավթի աճող առաջարկի և դանդաղող պահանջարկի պատճառով: Առաջարկի աճը տեղի է ունենում ԱՄՆ-ում արդյունահանման ծավալների և կոմերցիոն պաշարների ռեկորդային մակարդակների, ինչպես նաև ՕՊԵԿ-ի կողմից առաջարկի հետագա կրճատման անկարողության պայմաններում:

Բենզինի և դիզելային գներն աճել են նավթի վերականգնմանը զուգընթաց՝ 2016թ-ի հունվարի նկատմամբ համապատասխանաբար 30 և 85 տոկոսներով:



2016-2018թ տեղի ունեցած նավթի գնի վերականգնումը օգնել է զգալիորեն վերականգնվել ռուսական ռուբլուն՝ ինչպես ԱՄՆ դոլարի, այնպես էլ ՀՀ դրամի նկատմամբ: Սակայն 2018թ-ի ընթացքում գործընթացների տրամաբանությունը էականորեն փոխվել է: Նավթի ու ռուսական ռուբլու պարզ վիճակագրական կապվածությունը խզվել է, որը արդյունք է Ռուսաստանի նկատմամբ արևմուտքի սանկցիաների և միջազգային շուկաներում զարգացող երկրների արժույթների անկման ընդհանուր միտումների:

Գծանկար 1 Բրենթ տեսակի նավթի գնի, ռուբլի/դոլար և ռուբլի/դրամ փոխարժեքների ինդեքսները(2016թ հունվար =100)




Աղբյուրը՝ Investing.com և հեղինակի հաշվարկներ

Միջազգային շուկաներում էներգակիների գների աճը իր արտացոլումն է գտել նաև հայաստանյան սպառողական շուկայում: 2016թ-ի դեկտեմբերի նկատմամբ բենզինը գները Հայաստանում աճել են 25.7, իսկ դիզելային վառելիքինը՝ 43.1 տոկոսով:

Վառելիքի գների նման աճը պայմանավորված սակայն ոչ միայն համաշխարհային շուկաներում էներգետիկ ռեսուրսների գնային շարժերով, այլև հարկային քաղաքականության փոփոխություններով:

Ուշագրավ է, որ բենզինի գինը 2018թ-ի փետրվարից նոյեմբեր փոփոխության չի ենթարկվել, չնայած միջազգային շուկաներում գների աճը շարունակվել է: Սակայն 4-րդ եռամսյակում վառելիքի միջազգային գների նվազմանը Հայաստանյան շուկան արձագանքել է, և դեկտեմբերին նոյեմբերի նկատմամբ բենզինի գինը նվազել է մոտ 3, իսկ դիզելվառելիքինը՝ 2.4 տոկոսով:

Գծանկար 2 Բենզինի և դիզելային վառելիքի գների ինդեքս(2016թ դեկտեմբերը =100)



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և հեղինակի հաշվարկներ

2. Մետաղների շուկա


2016-2018թթ արդյունքներով պղնձի բորսայական գները զգալիորեն աճել են, ինչը իր դրական ազդեցությունն է ունեցել ՀՀ տնտեսությունից հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման գների վրա: Սակայն 2018թ-ի ընթացքում պղնձի գները նվազել են, և

Միջազգային անդրադարձ 2

Մետաղների միջազգային գները 2016-2018թթ

Ոսկու գնանշումները դիտարկվող ժամանակահատվածում չեն բնութագրվող որևէ հստակ տրենդով, սակայն 2016թ-ից մինչև 2018թ դեկտեմբեր ավելացել են 15.3 տոկոսով:


Ոսկու գնանշումների դինամիկան, 1 տրոյական ունցիայի դիմաց ԱՄՆ դոլար



Աղբյուր՝ Investing.com

Ոսկու գների դինամի դրայվերները ուղղակի կամ անուղղակի կերպով դիտարկվող ժամանակահատվածում եղել են գեոքաղաքական ռիսկերը, ԱՄՆ ԴՊՀ քաղաքականությունը և շուկայական տոկոսադրույքները: 2018թ-ի առաջին 3 եռամսյակների ընթացքում ոսկու գինն անկում է ապրել ԴՊՀ քաղաքականության տոկոսադրույքի ԱՄՆ պարտատոմսերի շուկայի տոկոսադրույքների աճի պատճառով, ինչը զուգորդվել է նաև դոլարի արժևորմամբ: Այսինքն, ոսկին էժանացել է քանի որ մի կողմից թանկացել է այն գնանշող դոլարը, և մյուս կողմից՝ քանի որ աճել են ոսկու ներդրման այլընտրանքային ծախսերը՝ ֆինանսական գործիքների եկամտաբերությունները: Սակայն 2018թ-ի 4-րդ եռամսյակում ոսկին կտրուկ աճ է ունեցել՝ իմպուլս ստանալով ԱՄՆ-Չինաստան առևտրային առճակատման և դեկտեմբերին ԱՄՆ-ում բյուջետային ճգնաժամի (Government Shutdown) պատճառով:

Պղնձի բորսայական գները 2016թ-ի հունվարից գտնվել են աճի տրենդում՝ ավելանալով մոտ 35 տոկոսով:




Աղբյուր՝ Investing.com

Պղնձի գների աճը 2016թ-2017թթ պայմանավորված էր մի կողմից առաջարկի գործոններով, մասնավորապես՝ Չինաստանում և Ինդոնեզիայում արտադրության ընդհատումներով, մյուս կողմից՝ համաշխարհային տնտեսության վերկանգնմանը զուգահեռ պահանջարկի աստիճանական աճով: Սակայն ԱՄՆ-Չինաստան «առևտրային պատերազմը» և միջազգային շուկայում դոլարի արժևորումը էական կոռեկցիայի ենթարկեցին պղնձի գները հատկապես 2018թ-ի երրորդ եռամսակում, իսկ տարվա արդյունքներով պղնձի գները նվազել են

Պղնձի միջազգային գների աճը հանգեցրել է ՀՀ-ից պղնձի խտանյութի արտահանման գնի ավելացման: 2016թ-ի հունվարին պղնձի խտանյութի 1 տոննայի արտահանման գինը Հայաստանից, ըստ մեր հաշվարկների, կազմել է 835 դոլար, երբ Լոնդոնի բորսայում պղնձի 1 տոննայի դիմաց գինը կազմել է 4550 դոլար: 2018թ-ի հունիսին խտանյութի արտահանման գինը հասել էր դիտարկվող ժամանակահատվածում առավելագույն մակարդակին և կազմել է 1468 դոլար, երբ բորսայական միջազգային գինը կազմել է 6500 դոլար: Հաջորդ եռամսակում

բորսայական գների նվազմանը զուգընթաց խտանյութի արտահանման գինը նվազել է՝ դեկտեմբերին կազմելով 1220 դոլար:

Գծանկար 4 Պղնձի բորսայական միջազգային գնի և պղնձի խտանյութի արտահանման գնի դինամիկան դինամիկան, դոլար



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Investing.com և հեղինակի հաշվարկներ


3. Պարենային շուկա և սպառողական գներ

2016-2018թթ պարենային ապրանքների մեծ մասի բորսայական գների փոփոխության նկատմամբ հայաստանյան սպառողական գները անտարբեր են եղել: Բացառություն է եղել կարագի գների աճը, որին որոշակի ժամանակային լագով կտրուկ արձագանքել է հայաստանյան շուկան: Պետք է առանձնացնել շաքարավազի բորսայական գների նվազումը, որը, սկզբում ժամանակային խզմամբ և փոքր չափով, իսկ 2018թ-ի երրորդ եռամսյակում էականորեն նպաստել է հայաստանյան շուկայում շաքարի գների նվազմանը:


Միջազգային անդրադարձ 3

Պարենային ապրանքների միջազգային գները 2016թ-2018թ

Դիտարկվող ժամանակահատվածում միջազգային պարենային շուկայում ուշագրավ էր կարագի գնի դինամիկան, որը կտրուկ աճ գրանցեց 2016թ-ի վերջերից սկսած մինչև 2017թ-ի կեսեր՝ աճելով այս ընթացքում ավելի քան 45 տոկոսով: Սակայն հաջորդ ամիսներին կարագի գները նահանջեցին դեպի նախկին մակարդակներ, արդյունքում՝ 2018թ-ի դեկտեմբերին կարագի գինը 2016թ-ի հունվարի նկատմամբ ավելի է ընդամենը 4 տոկոսով: Շաքարավազի գինը նվազման ընդհանուր միտում է արձանագրել 2016թ-ի սեպտեմբերից՝ դիտարկվող ժամանակահատվածում նվազելով գրեթե կրկնակի:




Մսամթերքի բորսայական գները տարբեր միտումներ են ունեցել, սակայն բոլորին էլ բնորոշ է եղել ամբողջ ժամանակահատվածի համար հստակ տրենդի բացակայությունը: Տավարի մսի գները նվազել են 7.7, իսկ տավարի մսի գները՝ 7.3 տոկոսով:




Աղբյուր՝ Investing.com

Կաթնամթերքի բորսայական գները ևս հիմնականում անորոշ դինամիկա են ունեցել: Կաթի գները դիտարկվող ժամանակահատվածում աճել են 0.4 տոկոսով, իսկ պանրի գները նվազել 6.7 տոկոսով: Սակայն առանձին ժամանակահատվածներում երկու ակտիվների գներն էլ մեծ տատանումներ են ունեցել:




Աղբյուր՝ Chicago Mercantile Exchange

Հացահատիկի բորսայական գները և անորոշ, հակասական միտումներ են ցուցաբերել դիտարկվող ժամանակահատվածում: Ցորենի գները աճել են 4.9, իսկ եգիպտացորենինը 0.8 տոկոսով:



Աղբյուր՝ Investing.com

Հավի մսի գները դիտարկվող ժամանակահատվածում աճել են 13, իսկ բամբակինը՝ 18.5 տոկոս: 2018թ-ի ընթացքում չնայած մեծ տատանումներին, երկուսի գներն էլ էականորեն չեն փոխվել տարվա արդյունքներով:




Աղբյուր՝ Indexamundi.com, Investing.com

Դիտարկվող ժամանակահատվածում կարագի գները հայաստանյան սպառողական շուկայում աճել են 43.8 տոկոսով, ինչն ակնհայտորեն միջազգային շուկայում 2016թ-ի վերջին սկսված և մինչև 2017թ-ի կեսեր տեղի ունեցած բորսայական գների մոտ 45 տոկոսով աճի արձագանքն էր: Սակայն **2017թ-ի օգոստոսից կարագի բորսայական գները նվազել են մոտ 17 տոկոսով, իսկ հայաստանյան սպառողական շուկայում այն իր արտացոլումը չի գտել:**

Շաքարավազի գները դիտարկվող ժամանակահատվածում նվազել են 16.9 տոկոսով, ինչը կտրուկ դրսևորվել է 2017 թ-ի չորրորդ և 2018թ-ի երրորդ եռամսյակներում: Այս դինամիկան ակնհայտորեն կրում է միջազգային շուկաների լազային ազդեցությունները:


Գծանկար 5. Կարագի և շաքարի գների ինդեքսներ(2016թ դեկտեմբեր = 100)



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և հեղինակի հաշվարկներ

Տավարի մսի գինը հայաստանյան սպառողական շուկայում 2016թ-ի դեկտեմբերի նկատմամբ 2018թ-ի դեկտեմբերին աճել է 34 տոկոսով: Աճն, ըստ էության, պայմանավորված է ներքին գործոններով: Խոզի մսի սպառողական գները աճել են 35.3 տոկոսով, ինչը կոռելացված չի եղել միջազգային շուկայի զարգացումների հետ, և կրկին՝ պայմանավորված է ներքին գործոններով:


Գծանկար 61 Տավարի և խոզի մսի գների ինդեքս(2016թ դեկտեմբեր = 100)



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և հեղինակի հաշվարկներ

Կաթի գները դիտարկվող ժամանակահատվածում աճել են՝ պայմանավորված հատկապես 2018թ-ի 4-րդ եռամսյակի զարգացումներով: Պանրի գները հայաստանյան սպառողական շուկայում դիտարկվող ժամանակահատվածում աճել են 7.7 տոկոսով:


Գծանկար 7 Կաթնամթերքի գների ինդեքսներ (2016թ դեկտեմբեր = 100)



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և հեղինակի հաշվարկներ

Այուրի գները դիտարկվող ժամանակահատվածում նվազել է 6.7, իսկ թռչնամսի գները աճել 4.2 տոկոսով: Ընդ որում, ուշագրավ է որ 2018թ-ի հուլիսից թռչնամսի գները կտրուկ փոխել են իրենց ուղղությունը և մինչև դեկտեմբեր աճել 12 տոկոսով: Ի հակադրություն ներքին շուկայի զարգացումների, այս ժամանակահատվածում թռչնամսի գները միջազգային շուկայում նվազել են մոտ 18 տոկոսով:

Գծանկար 8. Այուրի և թռչնամսի գների ինդեքսներ (2016թ դեկտեմբեր = 100)




Աղբյուր՝ ՀՀ ՎԿ և հեղինակի հաշվարկներ

4. Միջազգային ապրանքային ինդեքսներ

Համաշխարհային բանկի կողմից ցածր և միջին եկամտով երկրների համար պարբերաբար հաշվարկվող ապրանքային գների ինդեքսները 2018թ չորրորդ եռամսյակի ընթացքում նախորդ տարվա համեմատ նվազել են ինչպես էներգետիկ ապրանքների այնպես էլ ոչ էներգետիկ ապրանքների դեպքում: Ինդեքսների վարքագիծը հիմնականում պայամանավորված է եղել համաշխարհային ապրանքային շուկաներում գնային փոփոխություններով: Էներգետիկ ապրանքների գնային ինդեքսը 2017թ դեկտեմբերից հետո կտրուկ աճել է, սակայն փետրվար ամսից սկսած աճը մեղմվել է 5 տոկոսային կետով: Սակայն մարտից հետո՝ և ապրիլին, և մայիսին այն կրկին աճեց մոտ 5 տոկոսային կետով, հունիսին աճը դանդաղեց, սակայն սեպտեմբերին հունիսի նկատմամբ մոտ 4 տոկոսային կետով աճ է եղել՝ պայամանավորված նավթի համաշճարհային գների աճով: Հոկտեմբերին սեպտեմբերի նկատմամբ մոտ 2 տոկոսային կետով աճից հետո ինդեքսը սկսել է նվազել և արդեն դեկտեմբերին սեպտեմբերի նկատմամբ մոտ 22,2 տոկոսային կետով անկում է արձանագրվել:

Ոչ էներգետիկ ապրանքների դեպքում նույնպես 2017թ դեկտեմբերից հետո մոտ 2,9 տոկոսային կետով աճ է եղել, ինչը հունիս ամսին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ կազմել է 3,77: Սակայն հունիս ամսվանից հետո գները սկսել են նվազել, ինչի արդյունքում սեպտեմբերին հունիսի նկատմամբ մոտ 6,9 տոկոսային կետով անկում է արձանագրվել: Սեպտեմբերից հետո հոկտեմբերին մի փոքր աճից հետո նվազման միտումը շարունակվել է, ինչի արդյունքում դեկտեմբերին սեպտեմբերից հետո 0,24 տոկոսային ակնկում է եղել: Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ 2018թ դեկտեմբերի անկումը մոտ 3,72 տոկոսային կետ է եղել:

Գծանկար 10 Համաշխարհային Բանկի կողմից հաշվարկվող էներգետիկ և ոչ էներգետիկ ապրանքների ինդեքսների դեինամիկան (2010թ=100)



Աղբյուր՝ ՀԲ

Գյուղատնտեսական ապրանքների դեպքում աճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ 2018թ մարտին մոտ 5 տոկոսային կետի էր հասել, սակայն հունիսին մարտից հետո շարունակվող աճը կանգ է առել և մայիսի համեմատ գները ընկել են մոտ 2,6 տոկոսային կետով, ինչի արդյունքում դեկտեմբերի նկատմամբ աճը հունիսին կազմել է 4,2 տոկոս: Հունիսից հետո անկումը շարունակվել է և սեպտեմբերին հունիսի նկատմամբ մոտ 6,4 տոկոսային կետով անկում է ստացվել: Սեպտեմբերից հետո՝ հոկտեմբերին, մոտ 0,9 տոկոսային կետի աճից հետո նորից անկում է գրանցվել, սակայն դեկտեմբերին սեպտեմբերի նկատմամբ մոտ 0,15 տոկոսային կետով աճ է եղել: Նշենք որ ոչ էներգետիկ ապրանքների ինդեքսում գյուղատնտեսական ապրանքները 64,9 տոկոսային կշիռ ունեն: Գյուղատնտեսական մթերքների ինդեքսի կազմում 40 տոկոս կշիռ ունեցող մթերքների ինդեքսը 2017թ դեկտեմբերից հետո աճի միտում է սկսել: Արդյունքում աճը մինչև 2018թ մարտ ամիսը հասել էր 5,28 տոկոսային կետի(տե՛ս Հավելված): Մարտից հետո ապրիլին գրանցված մոտ 2,5 տոկոս աճից հետո միտումը դանդաղել է, իսկ հունիսին մարտի նկատմամբ 0,45 տոկոսային կետով անկում է

գրանցվել: Սեպտեմբերին հունիսի նկատմամբ անկումը մոտ 7,9 տոկոսային կետ է եղել: Սակայն հոկտեմբերին 1 տոկոսային կետի աճ է եղել, ինչից հետո արդեն դեկտեմբերին սեպտեմբերի նկատմամբ 0,65 տոկոսային կետով աճ է գրանցվել: 2018թ դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ մոտ 3 տոկոսային կետով անկում է գրանցված:

5.Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների սպառողական գների ինդեքսը 2017թ-ից հետո 2,8 տոկոս աճ է արձանագրել, ինչից հետո փետրվարին 0,5 տոկոս անկումից հետո մարտ ամսին փետրվարի նկատմամբ կրկին աճել է մոտ 0,1 տոկոսով: Մարտից հետո գների անկման տրենդ է սկսվել՝ մարտի նկատմամբ ապրիլին նվազել է 0,3 տոկոսային կետով, մայիսին՝ 1, իսկ հունիսին 1,6 տոկոսով: Հունիսից հետո մինչև հուլիսին 1,2 տոկոս նվազել են, որից հետո մինչև սեպտեմբեր 0,9 տոկոսով աճ է արձանագրվել: Հոկտեմբերի 0,1 տոկոս աճից հետո նոյեմբերին 1 տոկոս աճ է եղել, որից հետո դեկտեմբերին աճը հասել է 1,5 տոկոսի:


Գծանկար 8 Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում (2016թ=100)



2018թ հունվարին նախորդ տարվա վերջի համեմատ դիզելային վառելիքի գները 19,41 տոկոսային կետ աճ են արձանագրել, ինչից հետո աճի միտումն ավելի դանդաղ է եղել՝ փետրվարին հունվարի նկատմամբ աճը կազմել է 4,71 տոկոսային կետ, իսկ մարտին 0,1 տոկոսային կետ փետրվարի նկատմամբ: Ապրիլ և մայիս ամիսներին գները ըստ էության չեն փոխվել, իսկ հունիսին մայիսի նկատմամբ 0,2 տոկոսային կետով աճել են: Հունիսից գները սկսել են աճել և սեպտեմբերին հունիսի նկատմամբ 3,2 տոկոսային կետով աճել են: Սեպտեմբերից հետո անփոփոխ մնալով դեկտեմբերին գները նվազել են 3,5 տոկոսային կետով:

Բենզինի գները հունվարին դեկտեմբերի նկատմամբ աճել են 5,4 տոկոսով, ինչից հետո փետրվերին կրկին 3,6 տոկոս աճից հետո մարտ ամսին աճը փետրվարի նկատմամբ 0,1 տոկոս է եղել: Մարտից հետո գնային փոփոխություն ըստ էության չի եղել և միայն մոտ 4 տոկոսային կետով անկում է եղել դեկտեմբեր ամսին: Հունվարին վառելիքի գների նման աճը պայմանավորված է եղել ոչ միայն հարկման համակարգի փոփոխությամբ, այլ նաև համաշխարհային շուկաներում էներգետիկ ռեսուրսների գնային շարժերով:

Գծանկար 9. Միջազգային և հայաստանյան շուկաներում գների կոռելացիան, 2017-2018թթ



Աղբյուր՝ հեղինակի հաշվարկներ

Դիտարկված ապրանքային խմբերի միջազգային և հայաստանյան շուկաներում փոփոխությունների կորելացիոն կապերը հետաքրքիր դրսևորում են ունեցել: Ամենամեծ կապը արձանագրվել է բենզինի և դիզելային վառելիքի դեպքում՝ համապատասխանաբար 0,86 և 0,67: Խոզի և տավարի մսի դեպքում բացասական կորելացիոն կապ է դիտարկվել: Շաքարի դեպքում կորելացիայի գործակիցը 0,71 է կազմել: Այլուրի և այլ հացահատիկի դեպքում -0,83 բացասական կորելացիոն կապ է դրսևորվել համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող հացահատիկային ապրանքների ինդեքսի հետ:

Հավելված

Համաշխարհային Բանկի ապրանքային գների ինդեքսը ցածր և միջին եկամտով երկրների (2010թ=100)

	Էներգետիկ ապրանքներ	Ոչ էներգետիկ ապրանքներ										Պարարտանյութ	Մետաղներ և հանքանյութեր	Թանկարժեք մետաղներ	
		Գյուղատնտեսական ապրանքներ	Խմիչքներ	Սթեյր	Հում			Քիմիական			Հիմնական մետաղներ (օրինակ երկաթի)				
					Չեթ և ստուդ	Հացահատիկ	Այլ մթերքներ	Փայտանյութ	Այլ հումքային նեսուրաներ						
2016M12	68.38	82.87	87.92	87.08	90.71	94.16	74.70	100.66	81.58	82.84	80.20	73.82	73.54	77.88	90.82
2017M01	68.89	84.76	90.15	88.28	93.24	96.23	77.89	103.21	83.61	82.24	85.11	77.25	74.54	79.06	93.58
2017M02	69.41	85.84	90.08	85.01	93.07	94.48	78.11	104.77	85.36	83.42	87.49	79.03	77.94	81.80	97.29
2017M03	65.32	84.45	88.26	84.35	91.25	90.19	77.40	105.18	82.99	82.68	83.33	78.33	77.34	81.35	96.74
2017M04	67.11	82.33	86.90	82.96	89.43	86.38	78.80	103.07	82.74	84.69	80.61	72.83	74.04	80.06	99.37
2017M05	64.34	82.53	88.35	82.32	92.08	88.34	83.42	104.84	82.35	85.77	78.60	68.16	72.24	79.08	96.77
2017M06	60.43	81.55	87.05	81.87	91.37	85.22	86.60	103.79	79.17	85.37	72.39	68.79	71.71	79.22	97.85
2017M07	62.26	83.04	87.57	83.18	91.77	87.17	85.43	103.57	79.59	86.02	72.56	68.54	75.39	82.12	95.61
2017M08	65.02	83.57	85.30	82.97	88.14	86.11	78.49	99.55	79.60	86.41	72.15	69.90	81.56	88.39	99.40
2017M09	68.50	84.77	86.33	82.16	89.59	88.84	79.61	99.62	80.50	87.97	72.34	75.07	82.68	90.50	101.81
2017M10	70.76	84.61	85.59	82.39	89.08	88.92	79.08	98.34	78.74	87.01	69.69	77.75	83.39	92.95	99.06
2017M11	76.25	84.92	85.96	81.40	89.86	89.13	80.33	99.44	78.82	87.12	69.74	78.98	83.46	92.62	99.28
2017M12	77.83	84.53	85.38	77.17	89.12	88.19	81.40	97.33	80.45	88.02	72.18	72.99	84.11	92.15	97.35
2018M01	85.47	87.41	87.53	77.87	91.49	89.36	86.09	99.20	82.79	90.37	74.50	75.23	88.57	96.99	102.67
2018M02	80.51	88.38	88.92	78.75	93.41	92.02	86.86	101.16	83.19	91.90	73.67	76.51	88.61	96.86	102.11
2018M03	80.97	88.07	90.37	81.93	94.40	94.39	89.11	99.18	84.87	92.22	76.85	78.30	84.47	92.90	101.56
2018M04	86.34	89.58	91.71	84.36	96.18	94.85	93.65	100.21	84.61	92.42	76.08	78.59	86.45	96.06	102.30
2018M05	91.64	89.53	91.54	85.46	96.29	91.70	94.41	104.03	83.08	89.01	76.58	77.40	86.79	96.43	100.13
2018M06	90.87	87.92	88.93	81.19	93.33	86.65	90.48	104.71	82.17	88.01	75.79	78.02	86.98	96.83	98.74
2018M07	91.78	84.13	86.34	79.64	89.97	83.32	86.67	101.69	80.94	87.12	74.18	82.62	79.77	88.03	95.08
2018M08	90.29	82.66	84.77	75.32	88.68	81.62	90.40	96.43	80.07	85.74	73.86	84.59	78.12	85.58	92.05
2018M09	94.84	81.06	82.51	73.91	85.43	78.94	85.62	93.78	79.78	86.45	72.48	86.68	77.44	84.54	91.17
2018M10	96.87	82.29	83.40	77.45	86.40	79.36	87.37	94.79	79.13	86.09	71.53	88.15	79.35	86.10	92.60
2018M11	81.91	81.13	82.24	77.57	84.84	76.72	85.85	94.61	78.28	85.41	70.50	93.11	77.50	83.84	92.74
2018M12	72.64	80.81	82.65	74.80	86.08	76.60	88.39	96.44	78.33	84.53	71.54	89.41	76.07	82.73	94.91